Վահան Թոթովենց

Աստվածային կոմեդիա

Մեր վաճառատան կառավարիչը հեռախոսի լսափողը կախելուց հետո մոտեցավ ինձ և ասաց.

Շուտ գնա մր. Ֆինկլշտայնի տունը և տես, թե ինչ արևելյան գորգեր կան, որոնք կարիք ունեն նորոգվելու և մաքրվելու:

Շատ լավ, ասացի և դուրս եկա անմիջապես դեպի մր. Ֆինկլշտայնի ապարանքը:

Մր. Ֆինկլշտայնը Ամերիկայի Միացյալ Նահանգների միլիարդատերերից մեկն էր: Ամերիկայի շատ հարուստների տներում եղել էի շնորհիվ արևելյան գորգերի մասնագետ լինելուս, բայց մինչև այդ չէի եղել Ֆինկլշտայնի բնակարանում:

Մր. Ֆինկլշտայնի բնակարանը գտնվում էր արիստոկրատների թաղում, բլուրի ամենաբարձր կետի վրա, շրջապատված զանազան տեսակի ծառերով, որոնց յուրաքանչյուր ճյուղին դիպել էր մարդկային մկրատը և արվեստական ձև տվել:

Դեռևս ծառուղին չմտած՝ իմ դեմ տնկվեցին երկու նեգր,որոնք պաշտպանում էին մր. Ֆինկլշտայնի բնակարանի մուտքը: Անմիջապես ներկայացրի մեր վաճառատան այցետոմսը և նրանք բաց արին դուռը:

Դռանը դիմավորեց երիտասարդ և գեղեցիկ մի սպասուհի, որի սպիտակ գլխանոցը միայն մատնում էր նրա սոցիալական դրությունը: Բարևեցի սպասուհուն և երկարեցի մեր վաճառատան այցետոմսը: Սպասուհին իսկույն ինձ

հրավիրեց դեպի դահլիճ, խնդրեց նստել, իսկ ինքը հեռացավ այցետոմսը ձեռին:

[redacted]

Երևի երիտասարդության բյուստն է, մտածեցի,- կամ ինքը ցանկացել է, որ վարձու արվեստագետը երիտասարդ քանդակե իրեն:

Պատի օջախում դարսված էին համաչափ փայտեր, որոնց ետևում վառվում էր էլեկտրական կարմիր մի լամպ՝ սոսկ վառվելու իլյուզիան տալու համար: Աջակողմյան լուսամուտներից, ծառերի արանքում, երևում էր փոթորկալի մի ծով, իսկ ծովի անմիջապես ետևը ցցվում էր հարևանի տան կտուրը:

Այս քաղաքում ծով չկա, մտածեցի, սա ի՞նչ ծով է, որ երևում է: Երբ շարունակեցի նայել, գլխի ընկա, որ փոթորկալի ալիքները չէին շարժվում սոսկ դեկորացիա էր, նատուրալիստական մի նկար:

Դահլիճի խորքի մուգ-կարմիր թավշյա վարագույրները բացվեցին, ներս մտավ մի պառավ կին, չափազանց պարզ հագնված և մոմի պես դժգույն դեմքով: Ծովային պատրանքը ինձ մի վայրկյան մտածել տվեց, որ ներս մտնողն էլ դեկորացիա է այնպես նկարային դեմք ուներ, բայց ոչ, սկսեց խոսել:

Դուք եկել եք արևելյան գորգե՞րը տեսնելու:

Այո, մադամ, պատասխանեցի և ոտքի կանգնեցի:

Գնանք ցույց տամ:

Ես հետևեցի նրան:

Նա ինձ առաջնորդեց մատենադարանը և խնդրեց, որ մատենադարանի արևելյան գորգերը նորոգեմ, լվամ և արդուկեմ:

Շատ լավ, պատասխանեցի մեքենայաբար, որովհետև այդ րոպեին իմ աչքերը հափշտակված էին մատենադարանի գրքերով:

Համաշխարհային ամբողջ գրականությունն այստեղ կար, բոլորը ոսկեզօծ, յուրաքանչյուր դարաշրջանի և ազգության գրականությունը դարսված միաչափ հատորներով և միագույն շապիկներով: Օրինակ՝ հելլենական գրականությունը ամբողջական դարսված էր դահլիճի արևմտյան պատի վերևում, ոչ մի անուն պակաս չէր՝ հունական երկնքի նման կապույտ շապիկով:

Կյանքումս առաջին անգամն էր, որ խորապես նախանձեցի հարուստին: Գրքեր, գրքեր՝ ահա իմ կյանքի երազը:

Պետք է խնդրել մադամից, որ թույլ տա աչքի անցկացնելու բոլոր գրքերը, մտածում էի, երբ տեսա, որ պառավը գնում էր դուրս:

Պառավի ետևից ես էլ դուրս եկա և գնացի վաճառատուն կառք բերելու և տանելու գորգերը նորոգելու և լվանալու համար:

Վերադարձիս արդեն որոշել էի խնդրել, որ ինձ թույլ տան գեթ տեսնելու Դանտեի «Աստվածային կոմեդիայի» մեծ հատորը, որի վրա շլացուցիչ տառերով գրված էր «Արքայական հրատարակություն»:

Վաղուց լսել էի, որ «Աստվածային կոմեդիայի» մի այդպիսի շքեղ հրատարակություն գոյություն ունի, որի նկարազարդումը գերազանցում է ցանկացած գրքի նկարազարդումը:

Անպայման այդ հրատարակությունը կլինի,– մտածում էի:

Երբ վերադարձա մր. Ֆինկլշտայնի ապարանքը, էլի ինձ դիմավորեց նույն գեղեցիկ սպասուհին:

Ի՜նչ լուռ բնակարան է, ասացի սպասուհուն՝ միջանցքներով անցնելիս, որպեսզի մի խոսք բանամ և հետզհետե հասնեմ գրքերի հարցին:

Լուռ է, այո, և շատ էլ տխուր, պատասխանեց սպասուհին:

Տխո՞ւր, ընդհակառակն, լավ է այստեղ, լուռ, խոր:

Այս հսկա տան մեջ միայն այդ պառավն է և մին էլ մր. Ֆինկլշտայնը՝ նրա ամուսինը, ուրիշ ոչ ոք չկա, շատ գործ էլ չկա, որ չտխրեմ: Ես դիմավորում եմ միայն այցելողներին և ճանապարհ գցում նրանց, ճաշն էլ դրսից է գալիս, ոչինչ չկա անելու, այնքան տխրում եմ, որ երբեմն մտածում եմ գնալ դուրս, լինել գործազուրկ, բայց լինել մարդկանց մեջ, աղմուկի մեջ:

[redacted], [redacted], [redacted], [redacted], [redacted]

- Կարդում եմ, պատասխանեց սպասուհին, շատ եմ կարդում, «Կապույտ գրքի» վերջին համարն ամբողջ վերջացրել եմ, ուզու՞մ եք ձեզ տամ, կարդացեք:

- «Կապույտ գիրքը» չեմ ուզում, ասացի և մատենադարան չմտած՝ բռնեցի նրա ձեռքը: Չդիմադրեք:

- Մի՛ վախենաք, փսփսաց նա:

- Մի բան եմ խնդրում քեզանից:

- Պատրաստ եմ, պատասխանեց սպասուհին: Նրա դեմքի վրա հրճվանքի մի մեծ ալիք բացվեց:

Սպասի՛ր, գորգերը հավաքեմ, կասեմ:

Գորգերը հավաքեցի, հանձնեցի նեգրին, որ դարսի կառքի մեջ, և մոտենալով սպասուհուն՝

-Երիտասարդ լեյդի ասացի, թույլ տուր առնեմ Գանտեի «Աստվածային կոմեդիա»-ի մեծ հատորը:

Սպասուհին ապշած նայեց իմ աչքերին և սկսեց բարձր ծիծաղել ու հռհռալ.

Խնդրեմ, խնդրեմ:

Առանց ուշք դարձնելու կանացի հռհռոցին արագորեն վերցրի «արքայական հատորը»: Թեթև էր, փորձեցի բանալ, բայց չկարողացա, դես-դեն շուռ տվի, անօգուտ: Սպասուհին շարունակում էր դաժանորեն ծիծաղել:

Զայրացած՝ գետին շպրտեցի Դանտեն:

- Այս բոլոր գրքերը կարտոնից են շինված, հարեց սպասուհին, ավելի լավ է, որ վերցնես «Կապույտ գիրքը» և կարդաս:

- Շնորհակալ եմ,– պատասխանեցի և սկսեցի քայլել դեպի դուրս:

Միջանցքից լսում էի, որ սպասուհին ծիծաղում էր անգութ կերպով:

1929 թ.